

ՍԱՄՎԵԼ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ

**ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԱԼՎԱԾ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ
ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ**

Սույն հոդվածում հեղինակը վերլուծության է ենթարկել իրավական պետության տեսության համա-
տեքստում ձևավորված մարդասիրական գաղափարների ծագումնաբանության և զարգացման հետ կապ-
ված հիմնահարցերը:

Մասնավորապես, հեղինակը իրավացիորեն նշում է, իրավական պետության տեսության հետ են
կապված ժողովրդավարական հասարակության այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են իրավաբանական
հավասարությունը, սոցիալական արդարությունը, իրավունքի գերակայությունը, մարդու իրավունքների
երաշխավորված պաշտպանությունը և այլն:

*Հիմնաբառեր- իրավական պետություն, իրավունքի գերակայություն, սոցիալական արդարություն,
իրավահավասարություն, մարդու իրավունքներ:*

Իրավական պետության տեսության հիմքը և բովանդակությունը կազմած գաղափարների սաղ-
մները, անկախ այն բանից, թե ինչպես է նախկինում այն կոչվել՝ օրենքի, արդարության, թե՛ օրինակա-
նության պետություն՝ չնայած տվյալ «նախագծի» ժամանակակից բնույթին, գերիշխող դասակարգի՝ ժողովրդավարության, ազատության հաստատման և պահպանման, իրավունքի և օրենքի գերիշխանու-
թյան սկզբունքներին լայն կամ սահմանափակ հա-
վակնությանը, հումանիզմի գաղափարների տես-
քով քննվում են դեռ իրենց ժամանակի առաջադեմ մարդկանց, մտածողների՝ Հին Հունաստանի, Հին Հռոմի, Հին Հնդկաստանի, Հին Չինաստանի և Հին ու Անտիկ աշխարհի այլ երկրների, փիլիսոփաների, պատմաբանների, գրողների և իրավաբանների դա-
տողություններում:

Այսպես, դեռ հին հունական փիլիսոփա-իդեա-
լիստ Պլատոնի¹ «Պետություն», «Օրենքներ» և այլ հայտնի երկխոսությունների մեջ այն միտքն էր առաջ քաշվում, որ «այնտեղ, որտեղ օրենքը ուժ չու-
նի և գտնվում է ինչ-որ մեկի իշխանության ներքո», անխուսափելի է «պետության մոտալուտ կործա-
նումը»: «Համապատասխանաբար, այնտեղ, որտեղ օրենքները սահմանված են ըստ որոշ մարդկանց շահերի, գործում է ոչ թե պետական կարգ, այլ մի-
այն ներքին երկպառակություններ»:

Պլատոնի կարծիքով՝ պայմանավորված ժո-
ղովրդավարությանն անխուսափելիորեն փոխա-
րինման եկող «իրական արդարությամբ արբած բռնակալությամբ, չափից ավելի ազատությունը վե-
րածվում է չափից դուրս ստրկության, պետական կարգի ամենավատ ձևն է, որտեղ իշխում են անօրի-
նությունը, կամայականությունը և բռնությունը»: Միայն այնտեղ, եզրակացնում է Պլատոնը, որտեղ

օրենքը կառավարողների տիրակալն է, իսկ նրանք՝
նրա ստրուկները, ես տեսնում եմ պետության և բո-
լոր բարիքների փրկությունը, ինչպիսին որ կարող
են նվիրել պետությանը աստվածները»:

Իրավական պետության տեսության հիմքում
դրված համանման գաղափարները զարգացել են
նաև Պլատոնի աշակերտ և քննադատ, հին ժամա-
նակների մեծագույն մտածող Արիստոտելի² աշխա-
տություններում՝ ինչպես նրան անվանել է Մարքսը:
Հենց նրան է պատկանում այն թևավոր խոսքը, որ
«Պլատոնն իմ բարեկամն է, բայց ամենամեծ ընկե-
րը՝ ճշմարտությունն է»: Նա կանգնած էր անհատի
իրավունքի, մասնավոր սեփականության՝ որպես
յուրաքանչյուր մարդու մեջ ինքն իր նկատմամբ
«բնական սիրո» դրսևորման եղանակի պաշտպանի
դիրքերում և, ի հակադրություն Պլատոնի, զարգաց-
րել է այն տեսակետը, որ պետությունը բնական
զարգացման արդյունք է, մարդկային շփման բարձ-
րագույն ձև և ընդգրկում է նրա մյուս բոլոր
դրսևորումները (ընտանիքի, գյուղի և այլ տեսքով):

Արտահայտելով իր վերաբերմունքը պետա-
կան իշխանության, իրավունքի և օրենքի նկատ-
մամբ՝ Արիստոտելն այն միտքն է առաջ քաշում, որ
«օրենքի գործը չի կարող լինել ոչ միայն իրավուն-
քով, այլև իրավունքի դեմ իշխելը, բռնությամբ են-
թարկելուն ձգտելը, իհարկե, հակասում է իրավուն-
քի գաղափարներին: Այնտեղ, որտեղ բացակայում
է օրենքի իշխանությունը, եզրակացնում է Արիստո-
տելը, տեղ չկա նաև պետական կարգին (որևէ
ձևով): Օրենքը պետք է իշխի բոլորի վրա»:

Իրավունքի, ազատության, մարդկային արժա-
նապատվության և մարդասիրության մասին Հին
Հունաստանի առաջավոր մտածողների գաղա-
փարների հետ համակարծիք են հին հռոմեական

www.journal.lawinstitute.am

քաղաքական և հասարակական գործիչների, գրողների, պատմաբանների, պոետների մարդասիրական հայացքները և տեսակետները: Հատկապես բացահայտորեն դա քննվում է հռոմեացի հռետոր, պետական գործիչ և մտածող Յիցերոնի³ աշխատություններում, այնպիսիք, ինչպիսիք են՝ «Պետության մասին», «Օրենքների մասին», «Պարտականությունների մասին» երկերը, ինչպես նաև՝ Կայսրության ժամանակաշրջանի հռոմեացի խոշորագույն մտածողների և փիլիսոփաների ստեղծագործություններում:

Ի՞նչ է պետությունը, ու՞մ սեփականությունն է այն, հարցնում էր Յիցերոնը: Եվ անմիջապես պատասխանում՝ ժողովրդի սեփականությունն ասելով հասկացվում է «ոչ թե մարդկանց յուրաքանչյուր միավորում՝ կամայական դրսևորմամբ», այլ «իրավունքի և շահերի ընդհանրությամբ միմյանց հետ կապված բազմաթիվ մարդկանց միություն»: Պետության և իրավունքի հարաբերակցությունը, պարզաբանում էր Յիցերոնը, ոչ այլ ինչ է, քան «ընդհանուր իրավակարգ»: Իրավունքի հիմքում նա անվտոն կերպով դնում էր մարդկային բնությունը, ինչպես և ընդհանրապես բնությանը բնորոշ բանականությունը և արդարությունը:

Լինելով բնական իրավունքի համոզված և հետևողական կողմնակից՝ Յիցերոնը ելնում էր նրանից, որ մարդու իրավունքներն ու ազատությունները չեն նվիրվում և սահմանվում որևէ մեկի ցանկությամբ ու կարգադրությամբ, այլ պատկանում են նրան հենց իր բնությամբ: Գործելով «ճշմարիտ օրենք» հասկացությամբ՝ Յիցերոնը դիտարկում էր այն որպես «բնությանը համապատասխանող, բոլոր մարդկանց վրա տարածվող բանական վիճակ, մշտական, հավերժական, որն արգելելով՝ պարտքի կատարման է հրավիրում, հրամայելով՝ հետ կանգնեցնում հանցագործության կատարումից, սակայն, երբ դրա կարիքը չկա, ոչինչ չի պարտադրում ազնիվ մարդկանց և չի արգելում նրանց...»:

Իրավական պետության տեսության առաջին քարերը դրած և հետագայում հիմքը կազմած գաղափարների ձևավորման առումով շատ կարևոր էր Յիցերոնի կողմից ձևակերպված իրավական այն սկզբունքը, որի համաձայն «օրենքին պետք է ենթարկվեն բոլորը, այլ ոչ թե որոշ քաղաքացիներ»: Կարևոր դարձավ նրա կողմից մշակված այն դրույթը, ըստ որի՝ յուրաքանչյուր օրենքին պետք է բնորոշ լինի «զոնե ինչ-որ հարցում համոզելու, այլ ոչ թե ամեն ինչին ուժով և սպառնալիքով հարկադրելու» ձգտումը, մարդասիրության, «օրինաչափության», ազատության ու արդարության համար պայքարի, պետական մարմինների կողմից ազատ քաղաքացիների և նույնիսկ ստրուկների նկատմամբ մարդա-

սիրական վերաբերմունքի համար կոչերը:

Բոլոր մարդկանց՝ անկախ հասարակության մեջ զբաղեցրած նրանց դիրքից ու գործունեությունից, մարդասիրական շարժառիթները, հոգևոր ազատության գաղափարները առանձնապես բարձրաձայն ու պահանջկոտ կերպով էին հնչում Սենեկայի ու այլ հեղինակների բազմաթիվ տրակտատներում: Նրանց թվում առաձնանում էին «Երջանիկ կյանքի մասին», «Բարեգթության մասին», «Հոգու հանգստության մասին», «Բարոյական անակներ Լուցիլիոսին», «Մեղեա», «Ազամեմնոն», «Էդիպ» և այլ տրակտատները: Իստ հատկանշական են նրա ելույթները ի պաշտպանություն «խոսող գործիքների»՝ ստրուկների:

Սենեկայի ուսմունքի համաձայն՝ բոլոր մարդիկ միմյանց նկատմամբ հավասար են այն իմաստով, որ նրանք «ստրկության ընկերակիցներ են», ունեն միանման ճակատագրի իշխանություն: «Ես ուրախությամբ ձեր կողմերից եկողներից իմանում եմ, որ դու քո ստրուկներին վերաբերվում ես՝ ինչպես քո մերձավորներին» - գրում է Սենեկան Լուցիլիոսին: Զո խելքի և կրթության դեպքում այդպես է հարիր: Նրանք ստրուկներ են: Ո՛չ, մարդիկ են: Նրանք ստրուկներ են: Ո՛չ, քո տան հարևաններն են: Նրանք ստրուկներ են: Ո՛չ, քո խոնարհ ընկերները: Նրանք ստրուկներ են: Ո՛չ, քո ստրկության ընկերները, եթե դու հիշես, որ և՛ քո, և՛ նրանց հանդեպ միևնույնն է ճակատագրի իշխանությունը»: Եվ հետո, «Անխելք է նա, ով ձի գնելով, նայում է միայն սանձին և ձիու ծածկոցին, ավելի հիմար է նա, ով մարդուն գնահատում է հագուստով կամ դիրքով, որը նույնպես միայն ծածկում է մեզ, ինչպես հագուստը: Նա ստրուկ է: Բայց միզուցե հոգով ազատ է: Նա ստրուկ է, բայց ինչո՞վ է դա նրան վնասում: Յու՛յց տուր ինձ, թե ով ստրուկ չէ: Մեկը ստրուկ է կրքին, մյուսը՝ ազահությանը, երրորդը՝ փառամոլությանը և բոլորը՝ վախին: Ստրուկների հետ քաղաքավարի եղի՛ր, քեզ բարձր ցույց տուր, առանց մեծամտության, թող նրանք քեզ հարգեն, ոչ թե վախենան»⁴:

Նման մարդասիրական շարժառիթները, որոնք անմիջապես կամ էլ որոշակի ժամանակ հետո համապատասխան պետաիրավական հայացքների և դրկտրինների են փոխակերպվել, ըստ որոնց՝ հասարակության և պետության մեջ պետք է գերիշխեն ոչ թե չարությունը, բռնությունը և կամայականությունը, այլ իրավունքը և օրենքը: Դրանք զարգացել են ոչ միայն Հին Հունաստանում և հիմն, Հռոմում, այլև հին Հնդկաստանում և Չինաստանում: Աշխարհի մասին միամիտ մատերիալիստական պատկերացումների հետ մեկտեղ, որոնք գետեղված են գիտակցությունը ծնվում է իրերից և մահանում նույնպես իրերումն կամ էլ «կյանքը մահվան

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

արմատն է, իսկ մահը՝ կյանքի արմատը» բանաձևերում: Չինաստանում, օրինակ, դեռևս հին ժամանակներում, նկատի ունենալով գերիշխող ստրկատիրական կարգը, փիլիսոփաների և իրավաբանների կողմից արտահայտվում է այն միտքը, որ «պետության մեջ պետք է իշխի օրենքի վրա հիմնված կարգ ու կանոնը»: Պնդում էին, որ տիրակալը եթե ցանկանում է մինչև կյանքի վերջը վտանգի չենթարկվի, պետք է լինի արդար, իսկ «երկրի կառավարումը պետք է հանգիստ լինի»: Չի կարելի երկրում ուժով կարգ ու կանոն հաստատել, քանի որ «երկիրը կառավարվում է արդարությամբ»:

Իհարկե, տվյալ և դրանց համակարծիք մտքերը և հայացքները միամիտ կլինեի ուղղակիորեն սկզբնական տեսքով ներառել իրավական պետության ժամանակակից հայեցակարգը ձևավորած սկզբունքների և գաղափարների համակարգում: Դա առավել անհնար է, քանի որ նրանց ոչ միշտ է բաժին ընկել խիստ տրամաբանություն, որոշակիություն և հետևողականություն: Իսկ բացի դրանից, նրանցից ոմանք, թեև արմատականորեն չեն տարբերվել «իրավական պետության» տեսության կազմավորման պատմական սկիզբը դրած գաղափարների և տեսակետներից, սակայն, այնուամենայնիվ, ուղղակիորեն չեն էլ ներգրավվել նրանց մեջ, օրգանապես չեն զուգակցվել նրանց հետ:

Այդպիսիների թվին կարելի է դասել, մասնավորապես, հայտնի հին չինացի փիլիսոփա Լաո Յզիի կանխադրույթները, ըստ որոնց՝ «Երբ աճում են օրենքները և հրամանները, մեծանում են գողերի և ավազակների թիվը»: «Երբ կառավարությունը պասիվ է, ժողովուրդը դառնում է բարեհոգի: Երբ կառավարությունը գործուն է, ժողովուրդը դառնում է դժբախտ», «պետք է պետության ներգործությունը դարձնել նվազագույն, իսկ ժողովրդին՝ բացառիկ» և այլն:

Մարդասիրական գաղափարների՝ իրավական պետության գաղափարների նախատիպի հետ չեն «ներգրավվում» և չեն զուգակցվում ոչ միայն հին չինացի կամ այլ արևելյան իմաստունների որոշ գաղափարներ և խոհեր, այլև Հին և Անտիկ աշխարհի մի շարք հայտնի իրավաբանների և փիլիսոփաների առանձին խոհեր:

Ի հաստատումն դրա՝ կարելի է հղում անել Գեմոկրիտի արտահայտություններին: Նա օրենքներն անվանել է «մտացածին վատ բան» և ասում է, որ «իմաստուն մարդը չպետք է ենթարկվի օրենքներին, այլ ապրի ազատ»:

Այն գաղափարների և դրույթների օրինակներից մեկը, որոնք չեն ներգրավվել և չէին կարող ներգրավվել ժամանակի ընթացքում իրավական պետության գաղափարախոսության նախատիպը դարձած գաղափարների, դրույթների շարքը, կա-

րող են ծառայել նաև Արիստոտելի այն արտահայտությունները, որ «որոշ մարդիկ իրենց բնությամբ ազատ են, մյուսները՝ ստրուկներ, և այդ վերջինների համար ստրուկ լինելը և՛ օգտակար է, և՛ արդար», որ «իր բնությամբ ստրուկ» է նա, ով կարող է պատկանել ուրիշին (դրա համար էլ նա պատկանում է ուրիշին), որ նա հաղորդակից է բանականությանն այն չափով, որ ի վիճակի է հասկանալ նրա հրամանները, սակայն անձամբ բանականություն չունի⁵:

Խորհելով ազատ մարդուց «խոսող գործիքի»՝ ստրուկի տարբերության մասին՝ Արիստոտելը գրել է, որ «բնությունը ցանկանում է», որ «ազատ մարդկանց ոչ միայն հոգևոր, այլև ֆիզիկական կազմվածքը տարբերվի ստրուկների ֆիզիկական կազմվածքից. վերջինների մոտ մարմինը հզոր է, պիտանի անհրաժեշտ ֆիզիկական աշխատանք իրականացնելու, ազատ մարդիկ ուղիղ են կանգնում և ընդունակ չեն նման տեսակի աշխատանքներ կատարելու, բայց դրա փոխարեն նրանք պիտանի են քաղաքական կյանքի համար»:

Չնչին սոցիալական կարգավիճակի և ստրուկների իրավունքների բացակայության մասին համանման, ամենևին ոչ մարդասիրական դրույթները դիտարկվող ժամանակահատվածում ոչ միայն հաստատվել, այլև տարբեր իրավական ակտերով օրենսդրորեն ամրագրվել են հռոմեացի իրավաբանների կողմից: Այսպես, Գայուսի «Ինստիտուցիաներում» մատնանշվում էր մասնավորապես այն, որ հռոմեական իրավունքում «մարդկանց գլխավոր բաժանումը» նրանում է որ՝

ա) «բոլոր մարդիկ կամ ազատ են կամ ստրուկներ»,

բ) ազատ մարդկանցից ոմանք ծնվել են ազատ, մյուսները՝ ազատ արձակվածներ և

գ) ազատ ծնվածները նրանք են, ովքեր ծնվել են ազատ, ազատ արձակվածները՝ նրանք, ովքեր օրինական ստրկությունից են ազատ արձակվել»:

Դիտարկվող ժամանակահատվածում այս և ակնհայտորեն այլ խտրական դրույթների և գաղափարների հետ միասին արտահայտվել են նաև իրենց էությամբ և բնությամբ մի տեսակ երկակի դատողություններ: Մի կողմից, դրանք եղել են՝ «ժողովուրդը պետք է պայքարի օրենքի, ինչպես իր պատերի համար» կամ էլ «կամայականությունը պետք է վերացնել ավելի արագ, քան հրդեհը» (Հերակլիտ) տեսակի դատողություններ, որոնք արտահայտվել են ստրկատիրական դարաշրջանում և ամբողջովին ընկալվել հետագա բոլոր ֆորմացիաների և դարաշրջանների մարդասիրական մտքով: Իսկ մյուս կողմից՝ ստրուկների իրավագրկությունն արդարացնող և ամրագրող կամ էլ թույլ տվող դատողությունները և դրույթները, ինչպես դա արել է Հերակ-

լիտը՝ լինելով նաև իր ժամանակի առաջադեմ մտքերի և դատողությունների հեղինակ, հասարակության արհեստական բաժանումը «լավագույն մարդկանց», որոնք նախընտրում են անհատին ընդհանուրից՝ անցողիկության մշտական փառքից և «անասունի նման հագեցող» ամբոխից:

Բնականաբար, տվյալ տեսակի դատողություններն ու եզրակացությունները, հատկապես նրանք, որոնք վերաբերել են հասարակության նշանակալի մասի՝ ստրուկների իրավագուրկ դրությանը, չէին կարող դուրս գալ ստրկատիրական ֆորմացիայի սահմաններից և ընկալված լինել հետագա բոլոր ֆորմացիաներով:

Այնուամենայնիվ, չնայած մտածողների եզրակացությունների և դատողությունների երկակի, մասամբ նաև ներքին հակասական բնույթին՝ դիտարկվող դարաշրջանի արդյունքներին, այդուհանդերձ տվյալ ժամանակաշրջանի հին մարդասիրական միտքը, պետաիրավական հայացքները և առաջատար, առաջադեմ մտածողների գաղափարները, անկասկած նախահիմք են դարձել հետագայում իրավական պետության տեսության հիմքը կազմող մարդասիրական գաղափարների և հայացքների հետագա ամբողջ գործընթացի համար:

Բնականաբար, մինչև իրավական պետության տվյալ հայեցակարգի ստեղծման ամբողջական ավարտը դեռ շատ հեռու էր: Անհրաժեշտ էր անցնել անհեղինակ ինտելեկտուալ ճանապարհ, որը չափվում էր ոչ թե հարյուրամյակներով, այլ հազարամյակներով: Բայց այնուամենայնիվ, խիստ հուսադրող սկիզբը դրված էր:

Այն սկզբնական մարդասիրական մտքերի բազմակիության ձևավորման մեջ էր, որն առաջացել է Հին և Անտիկ աշխարհի պայմաններում և վերաբերում էր ինչպես հասարակական, այնպես էլ պետական կյանքի ամենատարբեր ոլորտներին:

Դիտարկվող ժամանակաշրջանի մտածողների մարդասիրական մտքերը և գաղափարները արտահայտվել և զարգացել են ամենատարբեր ուղղություններով:

Սակայն, հատկապես ակտիվորեն և հստակորեն դրանք դրսևորվել են այնպիսի հարցերում, ինչպիսիք են՝ առաջին հերթին, քաղաքացիների իրավունքները և ազատությունները: Ընդ որում՝ խոսքը գնում էր ոչ միայն դրանց ընդարձակման, խորացման և ապահովման, այլև այդ իրավունքների և ազատությունների օգտագործման բանականության մասին, ինչպես դրա վրա ավանդաբար, ընդհուպ մինչև մեր օրերը, կենտրոնանում է հետագոտողների ուշադրությունը:

Այդ կապակցությամբ, ելնելով այն թեզից, որ ամեն ինչի չափից ավելին սովորաբար կտրուկ փոփոխություն է առաջացնում հակառակ տեսանկյու-

նից՝ լինի դա եղանակի, բույսի կամ մարմնի վիճակը, Պլատոնը իր «Պետության» մեջ հատուկ ընդգծում էր, որ «չափից ավելի ազատությունը, ըստ երևույթին, և՛ անհատի, և՛ պետության համար վերածվում է ոչ այլ ինչի, քան չափից ավելի ստրկության, «բռնակալությունը ծագում է ոչ թե ինչ-որ մի այլ կարգից, այլ ժողովրդավարությունից, այլ կերպ ասած՝ ծայրահեղ ազատությունից ծագում է մեծագույն և ամենադաժան ստրկությունը»:

Երկրորդը՝ օրենքի և օրինականության հարցերը, որոնց պահպանման շնորհիվ պետությունը, ինչպես պնդում էր Քսենոֆոնն իր «Հիշողություններ Սոկրատեսի մասին» երկում, «խաղաղ ժամանակ ծաղկում է, պատերազմի ժամանակ՝ անհաղթահարելի»:

Պետք է ընդգծել, որ տվյալ հարցերը պետության և հասարակության այլ ոլորտներին վերաբերող դրույթների հետ միասին բազմիցս կրկնվել և զարգացել են դիտարկվող ժամանակաշրջանի՝ Հին և Անտիկ աշխարհի մի շարք մտածողների աշխատություններում:

Դրանց թվում կարելի է նշել, օրինակ, Դեմոսֆենի խոհերն այն առիթով, որ «մեր պետության բարեկեցությունը, նրա ժողովրդավարական կառուցվածքը և ազատությունը» առաջին հերթին հիմնված է «ոչ այլ բանի, քան օրենքների վրա», կամ էլ Հիպերիլի արտահայտություններն այն մասին, որ «մարդկանց բարեկեցության համար պետք է ուժ ունենա օրենքը, ոչ թե ինչ-որ մարդու զայրույթը, որպեսզի ազատ մարդիկ վախենան հանցանշաններից, ոչ թե մեղադրանքից, որպեսզի քաղաքացիների անվտանգությունը կախված լինի ոչ թե նրանցից, ովքեր շողոքոքում են դինաստներին և զրպարտում քաղաքացիներին, այլ օրենքներին հավատարիմ լինելուց», Էսքինեսի խորհրդածություններն այն մասին, որ «հասարակ մարդը ժողովրդավարական պետությունում իշխում է օրենքով և ձայնի իրավունքով» և այլն:

Երրորդը՝ ժողովրդավարության և արդարության հարցերը, որոնք անխզելիորեն կապված են միմյանց, դիտարկվել են ամենատարբեր կողմերից և համեմատություններով:

Այսպես, Իսոկրատեսի կարծիքով նույնիսկ «ամենավատ կազմակերպված ժողովրդավարությունը» ոչ ժողովրդավարական կարգերի համեմատ, «այնուամենայնիվ, ավելի քիչ վնաս է պատճառում, իսկ լավ կառավարվողը՝ ունի մեծ առավելություն. նրան բնորոշ է մեծ արդարությունը, այն օգտակար է ամբողջ հասարակությանը և այդ պատճառով էլ ավելի հաճելի է այդ հասարակարգում ապրող քաղաքացիներին»:

Պլատոնի հայացքների համաձայն՝ իր բնությանը «այն, ինչ ավելի տգեղ է, դա էլ ավելի ամոթ է,

ավելի այլանդակ, օրինակ՝ անարդարությունը հանդուրժելը: Ըստ հաստատված սովորույթի՝ ավելի այլանդակ է անարդար վարվելը»: Եթե դու իսկական ամուսին ես, իր հերոս Կալիկլեսի շուրթերով հաղորդում է մտածողը «Գորգիաս» աշխատության մեջ, ապա տառապանք չես կրի, քանի որ անարդարությունը հանդուրժելը ստրուկների գործն է, ում համար ավելի լավ է մահանալ, քան ապրել, անարդարություններ և զոհաբերություններ է հանդուրժում, որովհետև ի վիճակի չէ պաշտպանել ո՛չ իրեն, ո՛չ էլ նրան, ով իր համար թանկ է»:

Չորրորդը՝ հասարակության սոցիալական շերտավորմանը վերաբերող հարցերն ընդհանրապես և աղքատների ու հարուստների սոցիալական կարգավիճակին վերաբերողը՝ մասնավորապես:

Այս առումով մինչև հիմա բոլոր երկրների և ժողովուրդների, մասնավորապես՝ ժամանակակից Հայաստանի համար, մշտապես խիստ հրատապ են եղել և մնում Արիստոտելի կողմից արտահայտված դրույթներն այն մասին, որ պետության համար «մեծագույն բարեհաջողություն է այն, որ իր քաղաքացիներն ունենան միջին, բայց բավարար սեփականություն, իսկ այն դեպքերում, երբ ոմանք չափից ավելի ունեն, իսկ մյուսները՝ ոչինչ, ծագում է կամ ծայրահեղ ժողովրդավարություն, կամ օլիգարխիա՝ մաքուր ձևով, կամ բռնակալություն? հենց հակադիր ծայրահեղությունների ազդեցությամբ»: Քանի որ բռնակալությունը, եզրակացնում էր մտածողը, առաջանում է ինչպես չափից ավելի սանձարձակ ժողովրդավարությունից, այնպես էլ օլիգարխիայից, խիստ հազվադեպ՝ պետական կարգի միջին ձևերից և դրանց նմաններից»:

Դիտարկվող ժամանակաշրջանում և ամբողջ հետագա դարերում լայն գործածություն է ստացել նաև Դեմոսֆենի գաղափարներն այն բանի անհրաժեշտության և արդարության մասին, որ օրինական կարգով հարուստներին «պարտադրեն կատարել իրենց պարտականությունները» և «չշեղվել պարտականությունների կատարումից», իսկ աղքատներին՝ «ազատել հալածանքներից», Սոլոնի մտքերը և արտահայտություններն այն մասին, որ «հարստությունից առաջանում է հղփացում, իսկ հղփացումից՝ լկտիություն», Հերակլիտի բարեմադրանքների տեսքով սարկազմիկ արտահայտություններն իր ազնվական ընդդիմախոսներին՝ Եփեսոս քաղաքի բնակիչներին՝ «Թող չլքի ձեզ հարստությունը, եփեսոսցիներ, որպեսզի դուք ամաչեք ձեր ստորությունից» և այլն:

Հինգերորդ՝ պետության և հասարակության, պետության և նրա քաղաքացիների հարաբերակցության հարցերը:

Այդ տեսանկյունից խիստ բնութագրական է Արիստոտելի խորհրդածություններն այն մասին, թե

«ակնհայտ է, որ պետությունը գոյություն ունի ըստ բնության և ըստ դրա էլ նախորդում է յուրաքանչյուր մարդու, քանզի վերջինը, հայտնվելով մեկուսացած վիճակում, չի հանդիսանում ինքնաբավ, ուստի նրա վերաբերմունքը պետության հանդեպ այնպիսին է լինում, ինչպես յուրաքանչյուր մասի վերաբերմունքն իր ամբողջին»⁷:

Բավականին տարածված և ժամանակային առումով պահանջված էին նաև փիլիսոփայի այն եզրահանգումները, որոնք բխում էին այն ակնհայտ թեզից, ըստ որի՝ պետության մեջ բարձրագույն իշխանությունը անպայման գտնվում է կամ մեկի, կամ քչերի, կամ էլ մեծամասնության ձեռքում, որ «երբ մեկը, կամ քչերը, կամ մեծամասնությունը կառավարում են՝ ղեկավարվելով հասարակական շահով, բնականաբար, պետական կառուցվածքի այդպիսի տեսակները ճիշտ են, իսկ նրանք, որոնց դեպքում հաշվի են առնվում կամ մեկի, կամ քչերի, կամ էլ մեծամասնության շահերը, հանդիսանում են շեղումներ»⁸:

Պետությանը, հասարակությանը և քաղաքացիներին վերաբերող, փոխկապվածության և փոխկախվածության մեջ դիտարկվող այդ տեսակի դրույթների կամ եզրահանգումների կողքին Հին և Անտիկ աշխարհի երկրներում ծնվել և զարգացել են գաղափարներ այն բանի վերաբերյալ, որ «պետությունը գոյություն ունի, երբ պահպանվում է յուրաքանչյուրի անձնական մասնակցությունը» (Լիկուրգոս), որ «արդարությունը հատուկ է մարդուն, երբեմն նաև ամբողջ պետությանը» (Պլատոն), «պետությունը չի կարող կառավարվել «պատահականությամբ», քանզի այն կկործանվի այնքան արագ, որքան նավը, եթե ղեկի մոտ կանգնի գնացողների մեջից վիճակահանությամբ նշանակված ղեկավարը» (Յիցերոն) և այլն:

Բնականաբար, միամիտ կլիներ կարծել, որ Հին և Անտիկ աշխարհի մտածողների արտահայտած և նմանատիպ խորիմաստ, մարդասիրական և այլ գաղափարներն ու դատողությունները ամբողջովին ընկալված են պետության և հասարակության զարգացման հետագա բոլոր փուլերում և ժամանակի ընթացքում դարձել են իրավական պետության տեսության մշակման գործընթացում որպես «շինանյութ» ծառայած գաղափարների և դատողությունների նախատիպը:

Սակայն, շատ ավելի միամիտ կլիներ կարծել, որ այդ գաղափարներն ու դատողությունները ոչ մի ազդեցություն չեն գործել հետագա բոլոր դարաշրջանների պետաիրավական գաղափարախոսության զարգացման վրա՝ ներառյալ իրավական պետության գաղափարների ձևավորման և զարգացման գործընթացը Միջին դարերում և այժմ:

¹ Платон.Собр.соч.: в 4т. М.,1994.

² Аристотель.Соч.: в 4 т. М.,1984.

³ Цицерон.Диалоги. О государстве. О законах. М., 1966; Он же. Избр. соч. М., 1975.

⁴ Античная литература. Рим. Хрестоматия. Мм 1981. С. 469,471.

⁵ Аристотель.Политика. Книга первая // История политических и право-вых учений. Хрестоматия / сост. Ячевский В. В./ Изд-во Воронежского ун-та, 2000. С. 148.

⁶ Античная демократия в свидетельствах современников. М., 1996; Роджерс Г. Демократия.. Очерк истории от Ближнего Востока до западных цивилизаций, М., 2007; и др.

⁷ Аристотель.Политика. книга первая // История политических и правовых учений. Хрестоматия / сост. Ячевский В. В.. Изд-во Воронежского ун-та,- 2000. С. 146.

⁸ Аристотель. նշվ. աշխ., էջ 154-155.

Самвел Барсегян

Соискатель института философии, социологии и права
Национальной академии наук Республики Армения

РЕЗЮМЕ

Происхождение и развитие гуманистических идей в теории правового государства

В данной статье автор анализировал проблемы связанные с этимологией и развитием гуманистических идей сформированные в контексте теории правового государства.

В частности, автор справедливо отмечает, что с теорией правового государства связаны такие принципы демократического общества, как юридическое равенство, социальная справедливость, верховенство права, гарантированная защита прав человека.

Ключевые слова: правовое государство, верховенство права, социальная справедливость, равноправие, права человека.

Samvel Barseghyan

Applicant in law at the Institute of philosophy, sociology and law of the
National Academy of Sciences, R A , applicant

SUMMARY

The origin and development of humanistic ideas in the theory of the rule of law

In this article, the author analyzed the problems associated with the etymology and development of humanistic ideas formed in the context of the theory of the rule of law.

In particular, the author rightly notes that the principles of a democratic state, such as legal equality, social justice, the rule of law, guaranteed protection of human rights, are connected with the theory of the rule of law.

Keywords: rule of law, law supremacy, social justice, equality, human rights.